

ՀՀ ԿԳՄՍՆ ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՒ ԱՆՎԱՆ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

## Հետազոտական աշխատանք

**Թեմա** - Լուծույթներ և լուծելիություն: Խառնուրդներ, խառնուրդների բաժանման եղանակները

Առարկա՝ Քիմիա

Դպրոց՝ Հ.50 դպրոց

Ուսուցիչ՝ Հասմիկ Ասատրյան

Ղեկավար՝ Լիդա Սահակյան

Երևան 2022թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լուծույթներ և լուծելիություն-----	3
Լուծույթների պատրաստման եղանակները-----	8
Լուծույթները էլեկտրոլիտներում և ոչ էլեկտրոլիտներում-----	9
Մաքուր նյութեր և խառնուրդներ-----	9
Հանքային կապակցող նյութերի բնագավառ-----	11
Դեղանյութերի պատրաստման բնագավառ-----	11
Եզրակացություն-----	14
Օգտագործված գրականության ցանկ-----	15

**Հետազոտական աշխատանքի նպատակը**

**Լուծույթները կյանքի գոյության համար կարևոր նշանակություն ունեն: Ձուրը՝ որպես լավագույն լուծիչ:**

**Ներածություն**

Լուծույթները համարվում են քիմիայի ուսումնասիրման բաժիններից մեկը: Գոյություն ունեն լուծույթների պատրաստման տարբեր եղանակներ, ինչպես նաև խառնուրդների բաժանման բազմաթիվ եղանակներ:

Լուծույթներն օգտագործվում են տարբեր բնագավառներում, էլեկտրոլիտներում, հանքային կապակցող նյութերի բնագավառում, դեղանյութերի բնագավառում, էլեկտրաքիմիայում և այլն:

Կենցաղում օգտագործվում են բազմաթիվ լուծույթներ, ինչպիսիք են յոդի լուծույթը, ժավելաջուրը և այլն:

**Լուծույթներ և լուծելիություն, խառնուրդների բաժանման եղանակները**

**Լուծույթը** ֆիզիկաքիմիական միատարր համակարգ է՝ կազմված լուծիչի և լուծվող նյութի մասնիկներից ու դրանց փոխազդեցության արգասիքներից: Մարդն ամենուրեք առնչվում է տարբեր նյութերի լուծույթների, առավել հաճախ՝ ջրային լուծույթների հետ: Արդյունաբերական և լաբորատոր բազմաթիվ գործընթացներ իրականացվում են ջրային միջավայրում: Կենսաբանական ռեակցիաները ևս ընթանում են ջրի մասնակցությամբ: Նյութերի լուծվելը ջրում պայմանավորված է վերջինիս կառուցվածքի առանձնահատկություններով: Ձուրը խիստ բևեռային լուծիչ է, ունակ է առաջացնելու ջրածնային կապեր, և այդ պատճառով ջրում լավ

լուծվում են իոնային և բևեռային կովալենտային կապերով միացություններ: Եթե նյութը, ջրի հետ խառնվելով, մանրանում է մինչև մոլեկուլներ կամ իոններ, և նյութերի մասնիկները տեսանելի չեն անգեն աչքով կամ մանրադիտակով, ապա առաջանում է համասեռ լուծույթ, որը երբեմն անվանում են իսկական լուծույթ: Լուծույթն այն համասեռ համակարգն է, որը բաղկացած է լուծիչի, լուծված նյութից և դրանց փոխազդեցության արգասիքներից: Օրինակ՝ ծծմբական թթվի ջրային լուծույթում առկա են ոչ միայն նշված նյութերի մոլեկուլներ, այլև դրանց փոխազդեցության հետևանքով գոյացած  $H^+$ , հիդրատացված իոններ:

Լուծման գործընթացն ուղեկցվում է և՛ ֆիզիկական, և՛ քիմիական երևույթներով: Լուծվող նյութի մասնիկներն անցնում են ջրի միջմոլեկուլյարին տարածություններ, բաշխվում են լուծույթի ամբողջ ծավալում, և միաժամանակ տեղի են ունենում նյութի մասնիկների հիդրատացում, էլեկտրոլիտների դեպքում՝ նաև դիսոցվում և այլ երևույթներ: Նշված պատճառներով էլ նյութերի լուծման ժամանակ անջատվում կամ կլանվում է ջերմություն: Եթե նյութը վատ է լուծվում ջրում, ապա որոշակի պայմանների առկայությամբ կարող է առաջանալ կախույթ (սուսպենզիա) կամ էմուլսիա, այսինքն՝ անհամասեռ խառնուրդ: Երբ անհամասեռ խառնուրդում մասնիկների չափերն այնքան փոքր են, որ չեն երևում անգեն աչքով, ապա այդպիսի համակարգերը կոչվում են կոլոիդ լուծույթներ: Կոլոիդները միջանկյալ դիրք են գրավում իսկական լուծույթների և կոպտադիսպերս համակարգերի միջև: Կաթը, մրգային կիսելները, սոսիսները, լաքերը, ներկերը, թանաքը և այլն կոլոիդներ են: Կոլոիդների համակարգերում դիսպերս ֆազի մասնիկներն ունեն-ից ամ չափեր: Կոլոիդների համակարգերը առաջանում են կոնդենսացման (գերհագեցած լուծույթից, գոլորշուց ու գերսատեցրած հեղուկից նոր ֆազի առաջացման սկզբնական փուլ) և դիսպերսման (հեղուկների փոշիացում և պինդ նյութերի խիստ մանրացում, սովորաբար մեխանիկական քանդում) միջոցով: Դիսպերս միջավայրի (պինդ, հեղուկ, գազ) և մանրացվող նյութի բնույթից կախված՝ կոլոիդ համակարգերը բաժանվում են աերոզոլների, փրփուրների, գոլերի, դոնդոնների և այլն: Չորը համընդհանուր լուծիչ է: Որպես օրինակ դիտարկենք շաքարի լուծվելը ջրում: Շաքարի կտորը ջրի մեջ գցելիս նկատում ենք, որ կտորը աստիճանաբար փոքրանում է և կարծես անհետանում, այնինչ հեղուկը միանգամայն թափանցիկ ու միատարր է

մնում: Այդ հեղուկում, թերևս միայն քաղցր համն է շաքարի առկայությունը վկայում: Լուծված նյութը բացահայտվում է ջրի գոլորշացմամբ, որից հետո սպիտակ բյուրեղային նյութ է մնում՝ նույն շաքարը: Նշանակում է շաքարը ջրում մանրանում է ու հեղուկի ողջ ծավալում հավասարաչափ բաշխվում, այսինքն՝ վերանում է շաքարի բյուրեղների ու ջրի միջև բաժանման սահմանը, ինչն էլ հենց լուծման գործընթացն է: Որպես արդյունք մնում է համասեռ թափանցիկ հեղուկը՝ լուծույթը: Ներկայացված օրինակում շաքարը **լուծվող նյութն է, ջուրը՝ լուծիչը**, իսկ **լուծույթը** լուծիչի ու լուծվող նյութի **համասեռ խառնուրդն է**:

Նման պատկերացումը բխում է լուծույթների վերաբերյալ ֆիզիկական տեսությունից, ըստ որի՝ լուծման պատճառը դիֆուզիան է, այսինքն՝ լուծվող նյութի մասնիկների ներթափանցումը լուծիչի միջմուկելուլային տարածությունները:

Մակայն լուծման գործընթացը գուտ ֆիզիկական երևույթ չէ, քանի որ լուծույթի հատկություններն ու լուծույթի բաղադրամասերի հատկությունները չեն համընկնում: Լուծումը բնութագրվում է նույն հատկանիշներով, որոնք բնորոշում են քիմիական ռեակցիաների ընթացքը, ջերմության անջատում կամ կլանումը, գույնի ու ծավալի փոփոխությունը և այլն: Բացի այդ, ջրային լուծույթներին բնորոշ է յուրօրինակ մի հատկանիշ՝ ջրի ու լուծվող նյութերի քիմիական փոխազդեցության (այսպես կոչված հիդրատացման) արգասիքների՝ հիդրատների առաջացումը: Հիդրատները ջրային լուծույթներում գոյություն ունեցող, փոփոխական բաղադրությամբ, ջրի հետ նյութի առաջացրած միացություններն են: Հիդրատացման երևույթի ապացույցն աղերի պինդ բյուրեղահիդրատների առաջացումն է, որոնց բաղադրությունում առկա է, այսպես կոչված բյուրեղաջուրը:

Աղերի բյուրեղահիդրատների օրինակներ՝

դառը կամ անգլիական աղ՝  $MgSO_4 \cdot 7H_2O$ ,

գիպս  $CaSO_4 \cdot 2H_2O$ ,

երկաթարջասպ՝  $FeSO_4 \cdot 7H_2O$  և այլն:

Լուծույթ առաջացնող նյութերի քանակությունները կարելի է կամայականորեն փոխել, բայց միայն որոշակի սահմաններում: Յուրաքանչյուր լուծվող նյութ - լուծիչ համակարգին բնորոշ է խառնման մի սահման, որը բնութագրվում է **լուծելիություն** հասկացությամբ (քանի որ միջին դպրոցի ծրագրի շրջանակներում քննարկվում է միայն ջուր լուծիչը, ուստի այսուհետ լուծույթ ասելիս նկատի կունենանք հենց ջրային լուծույթը):

Լուծելիությունն ունի ինչպես որակական, այնպես էլ քանակական բնութագիր: Որակապես լուծելիությունը տվյալ լուծիչում որոշակի նյութի ինքնաբերաբար լուծվելու հատկությունն է, իսկ քանակապես բնութագրվում է լուծվող նյութի և լուծիչի առաջացրած հազեցած լուծույթի բաղադրությամբ:

Տվյալ ջերմաստիճանում հազեցած լուծույթ առաջացրած նյութի զանգվածի  $m$  (ն-թ), հարաբերությունը լուծիչի զանգվածին՝  $m$  (լ-չ), կամ ծավալին՝  $V$  (լ-չ), անվանվում է այդ նյութի լուծելիություն (համապատասխանաբար՝  $Lm$  կամ  $Lv$  կամ լուծելիության գործակից՝

$$Lm = \frac{m(\text{ն-թ})}{m(\text{լ-չ})} / 100 \quad \text{կամ} \quad Lv = \frac{m(\text{ն-թ})}{V(\text{լ-չ})}$$

Եթե 100 գ ջուր վերցնեք ու դրանում սենյակային ջերմաստիճանում (20°C) խմելու սոդա լուծեք, ապա վերցրած ջրում այդ աղից կհաջողվի ընդամենը 9,54 գ լուծել: Որքան էլ լուծույթը խառնեք, սոդայի նոր քանակություն այլևս չի լուծվի, նոր քանակություն ավելացնելիս լուծույթի ու բյուրեղային պինդ նյութի միջև շարժուն հավասարակշռություն կհաստատվի, և տվյալ ջերմաստիճանում լուծույթը հազեցած կլինի խմելու սոդայով: **Հազեցած է այն լուծույթը, որում տվյալ պայմաններում այլևս լուծվող նյութի նոր բաժիններ չեն լուծվում:** Եթե այդ նույն ջերմաստիճանում 100 գ ջրում 9,54 գրամից պակաս զանգվածով խմելու սոդա լուծեք, ապա կստանաք **չհազեցած** լուծույթ: **Չհազեցած է այն լուծույթը, որում տվյալ պայմաններում հնարավոր է լուծվող նյութի նոր բաժիններ լուծել:** Չհազեցած լուծույթը պակաս քանակությամբ լուծվող նյութ է պարունակում, քան այդ նյութի հազեցած լուծույթը: Այնուամենայնիվ, կարող է գոյություն ունենալ նաև այսպես կոչված **գերհազեցած** լուծույթ, որում տվյալ պայմաններում ավելի մեծ քանակությամբ է լուծված նյութ պարունակվում, քան այդ նույն նյութի հազեցած լուծույթում: Գերհազեցած լուծույթ կարելի է ստանալ հետևյալ կերպ. բարձր ջերմաստիճանում տվյալ նյութի հազեցած լուծույթ են պատրաստում, չլուծված նյութը ֆիլտրում (զտում) են և տաք լուծույթը

դանդադորեն ու զգուշորեն սառեցնում մինչև սենյակային ջերմաստիճան: Ստացվող լուծույթը գերհագեցած է, ընդ որում՝ խիստ անկայուն, թափահարելիս կամ նյութի փոքրիկ բյուրեղ գցելիս ավելորդ նյութն արագորեն բյուրեղանում է: Ըստ ջրում լուծվելու հնարավորության՝ բոլոր նյութերը պայմանականորեն բաժանում են երեք խմբի՝ **լավ** լուծվող, **վատ** լուծվող և **գործնականորեն** անլուծելի:

Նյութը լավ լուծվող է համարվում, եթե 20°C ջերմաստիճանում 100 գ ջրում լուծված նյութի զանգվածը 10 գրամից մեծ է: Եթե նշված պայմաններում 100 գ ջրում 1 գրամից քիչ նյութ է լուծվում, ապա այդ նյութը վատ լուծվող է: Իսկ եթե 100 գ ջրում լուծված նյութի զանգվածը 0,01գրամից փոքր է, ապա նյութը գործնականորեն անլուծելի է համարվում:

Նյութերի լուծելիությունն էապես կախված է լուծված նյութի ու լուծիչի բնույթից, ջերմաստիճանից և գազերի դեպքում՝ ճնշումից:

Փորձով հաստատվել է, որ նյութերի փոխադարձ լուծելիությունը պայմանավորված է դրանց կառուցվածքային նմանությամբ. նմանը նմանի մեջ է լուծվում: Այսպես, աղերն ու թթուներն առաջին հերթին ջրում են լավ լուծվում, իսկ թթվածինը՝ բենզինում:

Պինդ, հեղուկ ու գազային նյութերի լուծելիությունը կախված է արտաքին պայմաններից:

**Պինդ նյութերի** լուծելիությունը հեղուկներում, սովորաբար ջերմաստիճանի բարձրացման հետ մեծանում է: Սակայն հայտնի են նաև նյութեր, որոնց լուծելիությունը ջերմաստիճանից գրեթե կախված չէ: Կան և այնպիսի նյութեր, որոնց լուծելիությունը ջերմաստիճանի բարձրացման հետ նույնիսկ նվազում է:

**Գազերի** լուծելիությունը հեղուկներում նվազում է ջերմաստիճանը բարձրացնելիս, ինչը պայմանավորված է գազի ու լուծիչի մոլեկուլների միջև կապի անկայունությամբ: Ճնշումը բարձրացնելիս գազի լուծելիությունն աճում է, և ընդհակառակը՝ ճնշումն իջեցնելիս գազի լուծելիությունը նվազում է: Անշուշտ, հաճախ եք նկատել, որ լիմոնադի կամ շամպայնի շիշը բացելիս գազի բուռն անջատում է տեղի ունենում:

**Պինդ նյութերի** (նաև հեղուկների) լուծելիության վրա ճնշումն էական ազդեցություն չունի, քանի որ սովյալ դեպքում ճնշումը փոփոխելիս ծավալի փոփոխությունը շոշափելի չէ:

**Հեղուկների** դեպքում լուծելիության փոխարեն օգտագործվում են խառնվող և չխառնվող հասկացությունները: Լուծույթների հատկությունները կախված են լուծույթում պարունակվող նյութի քանակից, ուստի այդ հատկությունները նկարագրելիս պետք է անպայման նշել լուծույթի բաղադրությունը:

Լուծույթի քանակական բաղադրության մոտավոր (որակական) գնահատման նպատակով օգտագործում են **խիտ** և **նոսր լուծույթներ** հասկացությունները:

**Խիտ լուծույթը** լուծված նյութի համեմատաբար մեծ քանակություն է պարունակում՝ այնպես, որ լուծիչի ու լուծվող նյութի քանակությունները համաչափելի են: Օրինակ՝ 8°C ջերմաստիճանում 100 գ ջրում 160 գ արծաթի նիտրատ է լուծվում, ուստի ստացվածը խիտ լուծույթ է (100 գրամն ու 160 գրամը համաչափելի մեծություններ են):

**Նոսր լուծույթում** լուծված նյութի փոքր քանակություն է պարունակվում՝ լուծիչի քանակության հետ անհամաչափելի: Օրինակ՝ 8°C ջերմաստիճանում 100 գրամ ջրում 0,02 գ կալցիումի սուլֆատ է լուծվում, ուստի ստացվածը նոսր լուծույթ է (100 գրամն ու 0,02 գրամը համաչափելի մեծություններ չեն):

Հարկ է ավելացնել, որ խիտ լուծույթ ու հազեցած լուծույթ հասկացությունները չի կարելի նույնացնել: Լուծույթը կարող է հազեցած լինել, բայց՝ նոսր, իսկ կարող է նաև՝ չհազեցած լինել, բայց՝ խիտ: Այնուամենայնիվ, նոսր և խիտ հասկացությունները բավական անորոշ են, քանի որ լուծույթում առկա նյութի կոնկրետ քանակությունը չեն բացահայտում: Մինչդեռ շատ հաճախ հարկավոր է հաշվի առնել, թե այս կամ այն լուծույթն ի՞նչ քանակությամբ նյութ է պարունակում, այսինքն՝ իմանալ լուծույթի ճշգրիտ քանակական բաղադրությունը:

Լուծույթի քանակական բաղադրությունն ընդունված է արտահայտել զանգվածային բաժնով, որը նշանակվում է հունական այբուբենի օմեգա՝  $\omega$  տառով:

Լուծված նյութի զանգվածային բաժինը լուծված նյութի զանգվածի՝  $m$  ( $ն-թ$ ), հարաբերությունն է լուծույթի զանգվածին՝  $m$  ( $լ-թ$ ):

Այդ հարաբերությունն արտահայտվում է միավորի մասով.

$$\omega = \frac{m(ն-թ)}{m(լ-թ)} \quad \text{կամ} \quad \text{տոկոսներով} \quad \omega = \frac{m(ն-թ)}{m(լ-թ)} \cdot 100\%$$

### **Լուծույթի բաղադրության արտահայտման եղանակները**

Լուծույթի քանակական բաղադրությունն առավել հաճախ արտահայտում են լուծված նյութի զանգվածային բաժնով և լուծույթի մոլային կոնցենտրացիայով (թնդություն): Լուծված նյութի զանգվածային բաժինը ( $W$ ) լուծված նյութի զանգվածի հարաբերությունն է լուծույթի զանգվածին: Այն հաճած արտահայտում են տոկոսով.

Լուծույթի մոլային կոնցենտրացիան ( $C$ ) լուծված նյութի քանակի հարաբերությունն է լուծույթի ծավալին (արտահայտված լիտրով).

Գոյություն ունեն լուծույթի բաղադրության արտահայտման այլ եղանակներ ևս, ինչպես, օրինակ, մոլային բաժինը, մոլալությունը:

### **Լուծելիությունը էլեկտրոլիտներում և ոչ էլեկտրոլիտներում**

Էլեկտրոլիտի լուծույթի էլեկտրահաղորդականությունը կարելի է բացահայտել պարզագույն սարքի միջոցով՝ էլեկտրոլիտի լուծույթ պարունակող էլեկտրական շղթայում լապմ տեղադրել: Հենց այդպես է հայտնագործել Մ. Ֆարադեյը լիցքավորված մասնիկների առկայությունը էլեկտրոլիտների լուծույթում: Կարելի է որոշել նաև էլեկտրահաղորդականության արժեքը՝ այդ նույն շղթայում լամպի փոխարեն տեղադրելով էլեկտրահաղորդականությունը չափող սարք:

ՄԱՔՈՒՐ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ, ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ  
ԲԱԺԱՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Առօրյայում մենք լսել ենք «մաքուր ջուր», «մաքուր աղ», «մաքուր արծաթ (կամ ոսկի)» և նման այլ արտահայտություններ: Իրականում այդ նյութերը բոլորովին էլ մաքուր չեն: Օրինակ՝ նույնիսկ ամենաբարձր հարզի արծաթե կամ ոսկե մատանին պարունակում է նաև այլ նյութեր, այսինքն՝ իրականում խառնուրդ է:

Մաքուր չէ նաև խմելու ջուրը, որը նույնպես պարունակում է խառնուրդներ՝ թեկուզ քիչ քանակով: Դեռ ավելին՝ իսկական մաքուր (թորած) ջուրն օգտակար չէ առողջությանը:

Օդը, որը մենք շնչում ենք, նույնպես խառնուրդ է ու բաղկացած է մի քանի գազից՝ ազոտ, թթվածին, ածխաթթու գազ, ջրային գոլորշիներ, արզոն և այլն: Մաքուր նյութերը բաղկացած են միայն մեկ նյութի մասնիկներից և ունեն հաստատուն բաղադրություն:

**Խառնուրդները** բաղկացած են մեկից ավելի նյութերի մասնիկներից, ըստ որում այդ բաղադրիչ նյութերը պահպանում են իրենց հատկությունները

Հաճախ (բայց ոչ միշտ) հնարավոր է անզեն աչքով տարբերել մաքուր նյութը խառնուրդից, օրինակ՝ տարբեր գույնի պինդ նյութերի խառնուրդները: Կամ, եթե թափանցիկ անոթի մեջ լցնենք ջուր, ավելացնենք ածխի փոշի և անոթը թափահարենք, ապա կստացվի ջրի ու ածխի փոշու խառնուրդ, որում պարզորոշ երևում են ածխի սև մասնիկները: Որոշ ժամանակ անց ջրից թեթև ածխի մասնիկները կբարձրանան վերև, և ջուրը կմաքրվի: Մակայն կերակրի աղը ջրում լուծելիս ջուրը թափանցիկ է մնում, և աղի առկայությունը ջրում բացահայտվում է, օրինակ, համը փորձելիս:

Շատ հաճախ անհրաժեշտ է լինում բաժանել խառնուրդներն իրենց բաղադրիչների: Հայտնի են այդպիսի բաժանման մի շարք եղանակներ, որոնցից առավել մատչելի են պարզեցումը, գտումը, շոգիացումը, մազնիսով բաժանումը, ինչպես նաև՝ թորումը:

**Պարզեցում:** Երբեմն տարբեր պատճառներով ջրի ծորակից հոսում է ավազի մասնիկներ պարունակող ջուր: Եթե այդ ջուրը լցնենք բաժակի մեջ և որոշ ժամանակ թողնենք, ապա ջրից ծանր ավազի մասնիկները կնստեն

բաժակի հատակին, և ջուրը կմաքրվի՝ կպարզվի: Այնուհետև հնարավոր է մաքրված ջուրը զգուշությամբ լցնել մեկ այլ բաժակի մեջ:

**Ձտում:** Եթե հեղուկին խառնված են չլուծվող պինդ մասնիկներ, ապա վերջիններս հնարավոր է առանձնացնել նաև գտմամբ (ֆիլտրմամբ): Այս եղանակից օգտվելիս օգտագործում են հատուկ գտիչ թուղթ (ֆիլտրի թուղթ): Ապակե կամ այլ նյութից պատրաստված ձագարդ ֆիլտրի թղթով տեղադրում են դնդունող անոթի վրա և ձագարի մեջ լցնում պղտոր հեղուկը: Պինդ նյութի մասնիկները մնում են գտիչ թղթի վրա, իսկ մաքրված թափանցիկ գտահեղուկը հավաքվում է դնդունող անոթի մեջ:

**Շոգիացում:** Նշված երկու եղանակով անհնար է բաժանել հեղուկը և դրանում լուծված պինդ նյութը, օրինակ՝ կերակրի աղը կամ շաքարը ջրից: Այդ դեպքում կարելի է կիրառել շոգիացումը: Օրինակ՝ եթե շաքարի ջրային լուծույթը լցնենք թասիկի մեջ և սպիրտայրոցով կամ այլ տաքացուցիչով տաքացնենք, ապա որոշ ժամանակ անց ջուրը կգոլորշանա, իսկ շաքարի մանր բյուրեղները կմնան թասիկի հատակին:

**Թորում:** Իսկ ինչպե՞ս վարվել, եթե անհրաժեշտ է բաժանել միմյանց մեջ լավ լուծվող հեղուկները, օրինակ՝ սպիրտը կամ նավթը և ջուրը: Դեռ հին ժամանակներում մարդիկ նկատել էին, որ այդպիսի հեղուկները հնարավոր է բաժանել իրարից՝ խառնուրդը եռացնելով, և ապա՝ ավելի դյուրաեռ (հեշտ եռացող) հեղուկի գոլորշին սառեցնելով ու մեկ այլ անոթում ստացված մաքուր հեղուկը հավաքելով: Սա շատ կարևոր եղանակ է, որի միջոցով, օրինակ, նավթից ստանում են բազմաթիվ արժեքավոր բաղադրիչներ:

**Մագնիսով բաժանում:** Այս եղանակից հնարավոր է օգտվել, եթե խառնուրդի բաղադրիչներից մեկը ձգվում է մագնիսով, օրինակ՝ երկաթի մանր տաշեղների ու ծծմբի փոշու խառնուրդների դեպքում: Այդպիսի խառնուրդին մագնիս մոտեցնելիս երկաթի փոշին կձգվի մագնիսի վրա ու կառանձնանա:

Գոյություն ունի լուծույթների կիրառման լայն բնագավառ:

### **Հանքային կապակցող նյութերի բնագավառ**

Հանքային կապակցանյութեր կոչվում են այն փոշենման նյութերը, որոնք ջրի հետ խառնվելիս առաջացնում են պլաստիկ դյուրամշակելի մասսա, որը ժամանակի ընթացքում ֆիզիկաքիմիական պրոցեսների

հետևանքով ամրանալով, վերածվում է քարանման մարմնի: Ջրի հետ կապակցանյութի պլաստիկ խառնուրդը կոչվում է կապակցող խմոր /ցեմենտի խմոր, գիպսախմոր և այլն/, իսկ վերջնականապես ամրացած կապակցող խմորը՝ արհեստական քար /ցեմենտաքար, գիպսաքար կրային քար և այլն/:

**Ղեղանյութերի պատրաստման բնագավառ**

Հեղուկ ղեղաձևերը ղեղերի բացթողման ձև են, որոնք ստացվում են ազդող նյութերի խառնումից կամ լուծումից ջրում, սպիրտում, յուղերում կամ այլ լուծիչներում, ինչպես նաև բուսական հումքերից ազդող նյութերի դուրս բերման ճանապարհով: Իրենց ֆիզիկաքիմիական բնույթով հեղուկ ղեղաձևերը ազատ դիս պերս համակարգեր են, որտեղ ղեղանյութը (դիսպերս ֆազը) հավասարաչափ բաշխված է հեղուկ դիսպերս միջավայրում: Նյութերը, որոնք կազմում են լուծույթը, կոչվում են նրա բաղադրամասեր: Կախված հեղուկ ղեղաձևերի կազմից՝ նրանք բաղկացած են մեկ կամ մի քանի բաղադրամասից, այսինքն լինում են պարզ՝ բաղկացած մեկ բաղադրամասից, օրինակ՝ արևածաղկի յուղը, և բարդ՝ կազմված երկու և ավելի բաղադրամասերից: Ըստ կազմության՝ բարդ ղեղաձևերը պահանջում են լուծման և խառնման խիստ ճշգրիտ հաջորդականությամբ՝ յուն՝ կախված ղեղանյութերի և օժանդակ նյութերի ֆիզիկաքիմիական հատկություններից: Կախված դիսպերս ֆազի մանրացման աստիճանից և դիսպերս մի ջավայրի (լուծիչի) հետ նրա կապի բնույթից՝ տարբերակում են ֆիզիկաքիմիական հետևյալ համակարգերը: Հումոզեն դիսպերս համակարգերը բարձրա- և ցածրամուլեկուլային միացությունների իրական լուծույթներ են, որտեղ ղեղանյութերը մանրացված են մինչև մուլեկուլներ և իոններ, որոնք անտեսանելի են անգամ ուլտրամիկրոսկոպով, բարձրամուլեկուլային նյութերի լուծույթներ, կոլիդ լուծույթներ: Կոլիդ լուծույթներում մուլեկուլները և իոնները միանում են որոշակի ձևով առաջացնելով աչքի համար անտեսանելի միցելներ (ուլտրահետերոզեն համակարգեր): Հետերոզեն համակարգերին պատկանում են կախույթները, էմուլսիաները և համակցված ղեղաձևերը: Կախույթներում ղեղանյութերը գտնվում են համեմատաբար մեծ մասնիկների տեսքով (միկրոհետերոզեն համակարգեր), իսկ էմուլսիաները դիսպերս միջավայրի հետ

չխառնվող հեղուկներ են՝ մանրացված մինչև մանրագույն կաթիլներ (միկրոհետերոգեն համակարգեր): Այս բոլոր դիսպերս համակարգերն ստացել են ընդհանուր անվանում՝ լուծույթներ (օրինակ՝ նատրիումի քլորիդի, պրոտարգոլի, ժելատինի լուծույթները), թեև յուրաքանչյուր դիսպերս համակարգ ունի իր առանձնահատկությունները:

- Լուծույթները օգտագործվում են համաձուլվածքների բաղադրիչների տարբեր ֆազերում՝ պինդ լուծույթներ, քիմիական միացություններ, մեխանիկական խառնուրդների տեսքով:

- Էլեկտրոլիզը իրականացվում է լուծույթների միջոցով:

Էլեկտրոլիզը հոսանքի բևեռների վրա ընթացող վերօքս ռեակցիա է, երբ էլեկտրոլիտի լուծույթով կամ հալույթով անց են կացնում հաստատուն էլեկտրական հոսանք: Ֆիզիկա-քիմիական գործընթաց, էլեկտրական հոսանքով նյութի քայքայում, որի ժամանակ իոնները ստանում են ուղղորդված շարժում, երբ էլեկտրոլիտի լուծույթը կամ հալույթը տեղավորում են էլեկտրական դաշտում: Դրական լիցքավորված իոնները՝ կատիոնները, շարժվում են դեպի բացասական էլեկտրոդը՝ կաթոդը, իսկ անիոնները՝ դեպի դրական լիցք կրող էլեկտրոդը՝ անոդը: Որպես իներտ էլեկտրոդներ, սովորաբար օգտագործվում են գրաֆիտից, պլատինից և չժանգոտվող պողպատից պատրաստված թիթեղներ:

## Եզրակացություն

Ձուրը համարվում է համընդհանուր լուծիչ, և հիմնականում լուծույթ ասելով հասկանում ենք ջրի և այլ նյութի խառնուրդ:

Լուծույթը լինում է խիտ և նուր, ինչպես նաև չհազեցած, հազեցած և գերհազեցած Լուծույթները լինում են համասեռ և անհամասեռ և գոյություն ունեն լուծույթների բաղադրիչները միմյանցից առանձնացնելու տարբեր եղանակներ: Ձուրը որպես լուծույթ օգտագործվում է նաև դեղանյութերի պատրաստման բնագավառում:

Լուծույթներն օգտագործվում են համաձուլվածքների բաղադրիչների տարբեր ֆազերում՝ պինդ լուծույթների, քիմիական միացությունների, մեխանիկական խառնուրդների տեսքով:

Լուծույթների միջոցով է իրականացվում նաև էլեկտրոլիզը, որը լայնորեն օգտագործվում է ամենատարբեր նյութեր՝ մետաղներ, ալկալիներ, թթուներ, ջրածին, թթվածին, քլոր ստանալու, ինչպես նաև տարբեր առարկաներ և իրեր արծաթապատելու, ոսկեզօծելու, պղնձապատելու համար:

Եվ ահա այս ամենն է պատճառը, որ քիմիա գիտությունը արդի ժամանակներում ավելի է կարևորվում:

## Օգտագործված գրականություն

1. Լ. Սահակյան, Ռ. Հովսեփյան «Քիմիա-7» Երևան 2017
2. Գ. Ե. Ռուձիտիս, Ֆ. Հ. Ֆելդման «Քիմիա-7» Երևան «Անտարես» 2013 թ.
3. Ա. Խաչատրյան, Լ. Սահակյան, 2017  
«Զանգակ-97» հրատ., 2010 թ.
4. Справочник по химии Гоичаров А. И., Корнилов М. Ю. 1978 г.
5. Баикова В. М. «Химия после уроков», 1976 г.
6. Վ. Ա. Գրիցման «Անօրգանական քիմիայի 1-ին մաս. Ընթերցանության գիրք» 1983 թ.
7. Համացանցային տեղեկությունները՝ [armedu.am](http://armedu.am), [imdproc.am](http://imdproc.am) և այլ կայքերից-  
«Դեղագործական պատրաստուկների տեխնոլոգիան», «Լուծույթներ», «Խառնուրդներ»
8. В. Б. Алесковский, В. В. Бардин и другие- «Физико-химические методы анализа» им. «Химия» м. 1971 г.
9. Муровыв И. А.- «Технология жидких лекарств» м. 1971 г.